

Հ.Մ.Ը.Մ.ի Միջ-Դիւանային Հինգերորդ Հանդիպում Ուղղորթաունի Մէջ ՄԱՐՕ ԲԷՇԻՇԵԱՆ

Վերջին քառամեակին, գեղեցիկ սովորութիւն դարձած է, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի երեք շրջաններու Շրջանային վարչութեանց դիւանները եւ սկաուտական բաժանմունքներու ղեկավարները, տարին մէկ անգամ եւ ընդհանրապէս Փետրուար ամսուն, երկօրեայ հանդիպում մը կազմակերպեն եւ անոր ընթացքին ծանօթանան շրջաններու գործունէութեանց, կարելոր նուաճումներուն, դժուարութիւններուն եւ յատկապէս քննեն Հ.Մ.Ը.Մ.ը յուզող հարցեր:

Նման հանդիպման հինգերորդը այս տարի տեղի ունեցաւ 16-17 Փետրուար 2008ին, Պոսթընի արուարձաններէն Ուղղորթաունի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան գրասենեակը: Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու կողմէ այս ժողովին մասնակցեցան քոյր Մարօ Բէշիշեան եւ եղբ. Յովիկ Պետեւեան, Արեւելեան շրջանէն՝ եղբայրներ Հրաչ Մետրոպեան, Արա Մարկոսեան եւ Ռոպերթ Բալանթարի, իսկ Գանատայէն՝ Բաբգէն Կարապետեան, Մոսիկ Թոփուզեան եւ Տիրան Շահիսեան:

Երկօրեայ ժողովին ամբողջութեամբ մասնակցեցաւ Կեդր. Վարչութեան անդամ եղբ. Գօգօ Պալեան, որ նաեւ ողջոյնի խօսքով քաջալերեց ժողովականները, այս շինիչ հանդիպման համար:

Բարի գալուստի խօսքերով ժողովի բացումը կատարեց հիւրընկալ Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մետրոպեան, որ առաջին հերթին ծանօթացման առիթ ընծայեց ներկաներուն եւ ապա սկաուտ ղեկավարներն ու դիւանները իրենց առանձին հանդիպումները կատարեցին:

Դիւաններու բաժնի ժողովը վարեց հիւրընկալ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մետրոպեան:
Մասնակիցները յաջորդաբար ներկայացուցին իրենց շրջաններու գործունէութեանց ամփոփ զեկոյցները: Այս, ժողովականները անդրադարձան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ Մարզախաղերուն մասնակցելու մանրամասնութիւններուն, որոնք կը նախատեսուին իրականանալ Արցախի մէջ: Ժողովը լայնօրէն անդրադարձաւ անոնց նախապատրաստական եւ բարելաման գծով տարուելիք աշխատանքներու մասին: Եղան շինիչ առաջարկներ: Յատկապէս շեշտուեցաւ ամբողջական մասնակցութիւն բերելու կարելորութիւնը:

Իրագործուող մարզաճիւղերուն նկատմամբ, ժողովականները կարելոր գտան վոլիպոլի մարզաճիւղի զօրացումը, որպէսզի ան ալ իր արդար տեղը ունենայ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական կարելոր այս մարզախաղերուն մէջ:

Մարզական միացեալ աշխատանքներուն նաեւ զարկ տալու հեռանկարով,

որոշում ամուսնացաւ յաջորդ հանդիպման, սկաուտականին առընթեր, նաեւ կազմակերպել Մարգական հանդիպում:

Համագործակցութեան կարելորութենէն մեկնած, որոշում ամուսնացաւ, որ երեք շրջանները միասնաբար կազմակերպեն դաստիարակչական սեմինարներ, Միջ-շրջանային մարզախաղեր, ինչպէս նաեւ տարեկան աշխատանքային ծրագիրները փոխանակումներ, որպէսզի կարելոր նախաձեռնութիւններուն մասնակցելու կարելիութիւն ստեղծուի:

Լայ ժամանակ տրամադրուեցաւ նաեւ Հ.Ս.Ը.Մ.ի 90ամեակին նուիրուած աշխատանքներուն: Երեք շրջաններն ալ անխտիր, 2008 տարեշրջանի իրենց աշխատանքները նուիրած են Հ.Ս.Ը.Մ.ի 90ամեակին: Ասկէ անկախ, փափաք յայտնուեցաւ, որ նոյն նպատակին նուիրուած միացեալ ձեռնարկ մը կազմակերպելու կարելիութիւնը ուսումնասիրել, պատմական այս թուականը յատկանշող կրօնագարդեր, նամակաթուղթ, ծրարներ, դրոշմաթուղթ, շապիկներ եւ այլ իւրայատուկ իրեր հրապարակել:

Համագործակցութեան Էական նախաձեռնութիւն նկատուեցաւ նաեւ շրջաններու Շրջանային Ներկայացուցչական Ժողովներուն մասնակցութիւնը:

Դիւանային հանդիպման առընթեր տեղի ունեցաւ նաեւ երեք շրջաններու սկաուտական բաժանմունքներու ղեկավարներու միօրեայ հանդիպումը, որ վարեց հիւրընկալ շրջանի Շրջ. Սկաուտական խորհուրդի ատենապետ եղբ. Չարեհ Գարակիւլեան: Շահեկան այս հանդիպման ընթացքին եւս շեշտը դրուեցաւ համագործակցութեան եւ գիտելիքներու փոխանակման: Յատուկ շեշտ դրուեցաւ սկաուտական կարգերու իրագործման աշխատանքներուն վրայ: Վկայեալ կարգի պարագային որոշում ամուսնացաւ որդեգրել Հ.Ս.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի որդեգրած նիւթերը, իսկ Արարատեան կարգի պարագային, առաջարկուեցաւ թեկնածուն իր նախընտրած սկաուտական կարելոր նիւթը պատրաստէ իբրեւ թեզ եւ ներկայացնէ զայն Կեդրոնական Վարչութեան: Այս ձեւով կարելիութիւնը կը ստեղծուի նաեւ հարստացնելու Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտական գրականութիւնը:

Ժողովը լայնօրէն զբաղեցաւ նաեւ Ապրիլի առաջին շաբաթավերջին տեղի ունենալիք միջ-շրջանային սկաուտական բանակումին:

Հանդիպման վերջին բաժնով, երեք շրջաններու միասնական աշխատանքին համար իր գոհունակութիւնը յայտնեց եղբ. Գօգօ Պալեան եւ ըսաւ.
»Կեդրոնական վարչութիւնը մեծապէս կը քաջալերէ նման նախաձեռնութիւնները: Անձնապէս եւս կը հաւատամ եւ կը քաջալերեմ նման հանդիպումները, որոնք ոչ միայն ծանօթացման կը նպաստեն, այլ նաեւ համագործակցութեան եւ մանաւանդ գիտելիքներու, փորձառութիւններու եւ միութենական նորութիւններու փոխանակման գեղեցիկ առիթ կը հանդիսանան«:

Հիւրընկալ շրջանի անունով շնորհակալութիւն յայտնեց եղբ. Զրաչ Մեսրոպեան եւ ընդգծեց նման հանդիպումներու կարեւորութիւնը, որոնք համագործակցութեան կարելոր գրաւականներէն մէկն են:

Երկօրեայ հանդիպումը վերջ գտաւ Կիրակի, 15 Փետրուարի կէսօրին: Ժողովականները կէսօրուան ճաշով հիւրասիրուելէ ետք հրաժեշտ առին, յաջորդ հանդիպումը 14-15 Փետրուար 2009ին Լոս Անճելըսի մէջ կատարելու խոստումով:

Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանէն ժողովի մասնակիցները առաջին անգամ ըլլալով կ'այցելէին նշանաւոր իր համալսարաններով կրթական կեդրոն նկատուող Պոսթըն քաղաքը: Սոյն հանդիպումը նաեւ առիթ հանդիսացաւ ծանօթանալու քաղաքին: Միւս կողմէ, սկաուտ պատասխանատուները առիթ ունեցան տեսնելու Զայաստան բանակավայրը: